# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷԼԴԵՍՔՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Արամ Խաչատրյան համերգասրահի LED էկրան իր համակարգով բաղկացած է՝ լեդ էկրաններից, էլեկտրական ճախարակից, Էլեկտրական ճախարակի կառավարման վահանակից, ալյումինե կոնստրուկցիաներից և մալուխներից: Նշված լեդ էկրանները, էլեկտրական ճախարակը, Էլեկտրական ճախարակի կառավարման վահանակը, ալյումինե կոնստրուկցիաները և մալուխները պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Լրակազմում նշված ապրանքների երաշխիքային ժամկետները՝ առնվազն 1 տարի: Լրակազմում նշված ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, համապատասխան մասնագետի հրահանգավորումը, ինչպես նաև ուղղահայաց բեռի հենակետային կետի հաշվարկումը և կցման կետերի պատրաստումը իրականացվում է Մատակարարի կողմից: Լրակազմում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում տրված են դրանց նվազագույն պահանջները (կամ առավելագույն պահանջները, եթե խոսքը գնում է բացասական ցուցանիշի մասին. բացասական ցուցանիշները նշված են մեկ աստղանիշով՝ «*»): Իսկ եթե ցուցանիշը սահմանում է միջակայք, ապա առաջարկվող ապրանքը պետք է ներառի |

| | |
|---|---|
| | ցուցանիշի նշված միաջակայքը: Եթե ցուցանիշը նշված է երկու աստղանիշով՝ «**», ապա ցուցանիշը պետք է պահպանվի նույնությամբ: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ, ինչպես նաև լինեն տարածված, այսինքն՝ տեխնոլոգիաները կիրառվեն 2-ից ավել արտադրողների կողմից: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին: Տեխնիկական բնութագրի մանրամասները կցված են Հավելված 1-ին |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭЛДЕСКО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |